ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-16427 «01» 09 2020 թ.

«ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ
ք. Երևան, Տիգրան Մեծի 93 շին. 59.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել են 20.04.2020 թվականին՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020 թվականին՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը (այսուհետ՝ պայմանագրեր):

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հ.63 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանքներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ.հ. 137, 143, և 147 մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրերի 1.2 կետի համաձայն Աշխատանքները կատարվում է պայմանագրերի N 1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 18.06.2020 թվականին, իսկ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 11.06.2020

թվականին, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետներում պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագրերը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագրերը: Կատարողի կողմից պայմանագրերը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքների կատարման ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերից ՝ համարելով դրանք լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129